ւօտը դեռ Նոր բացուած՝ հասանք յԵյսք քաղաք, որ ինչպէս Պերտեանք՝ Նոր քաղաք է, այլ ազգայինք ինչպէս ատ Նոյնպէս և 'ի Նողայսք ունին եկեղեցի, որոց ժողովուրդը Նախիջևանցւոց հատուածներ են։ Այս կողմերս գրեթէ ամեն քաղաքաց մէջ կը գտնուին ազգայինք, որք 'ի միասին համրելով, պէտք է լինին 10,000 բաց 'ի Նախիջևանէ։ Նոր-Զերքաքի, Ստաւրապոլի, Եկատերինետարի և ապա դէպ 'ի Կասպից ծով՝ Ղզլարի մէջ կան բազմաթիւ Հայք, որ մեծագոյն մասամբ վաճառականութեան կը պարապին։ Որովհետև Եյսքի Նաւամատոյցը քաղաքէն բաւական հեռու շինուած է, և նաւը շատ չի մնար հոն, այն պատճառաւ քաղաք կարող չեղայ գնալու։

Եյսքէ մեկնելով՝ ճիշդ կէսօրին հասայ Ազախու ծովուն հիւսիսային ծայրը, Թայղան կոչուած քաղաքը։ Քաղաքիս անունը թաթար նշանակութեամբը՝ սահած կամ սպրդած կը թարգմանի հայերէն. և յիրաւի, բարձրադիր ցամաքն իբրև թումբ՝ կամ լաւ ևս հրուանդան սահած ինած է 'ի ծով։ Ռուսք Թականրոկ կը կոչեն որ եռանկիւնի-եղջիւր կը նշանակէ։ Զկայ ազգային եկեղեցի ատ՝ այլ բաւական հայկազունք կան 'ի քաղաքիս, զորս կը հովուեն Նախիջևանու երիցունք, զի երկաթուղով երկու ժամուան ճանապարհ է ատի 'ի Նախիջևան։

Թայղանի բնակչաց թիւը 30,000, այլ ինքն առաւել մեծ և փառաւոր քաղաքի երևոյթ ունի, փողոցները լայն և ընդարձակ, երկու կողմը մեծամեծ չէնքերով և ծառաստան ճեմելեաք զարդարուած. սակայն սորա անցեալն աւելի չքեղ է քան ներկայն. մերձաւոր դրացին Դոնեան Ռոստով